



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<<24 >> 05 2019թ.

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: \_\_\_\_\_

հեռ. (0312) 3-26-10

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ՎԵՐՋԻՆ ԴԱՍԻ ԱՌԹԻՎ

Սիրելի շրջանավարտներ

Ի սրտե շնորհավորում եմ բոլորիդ այս կարևոր օրվա՝ Վերջին դասի առթիվ:

Օրն ունի մեծ խորհուրդ, այն ազդարարում է ձեր մուտքը նոր կյանք, նոր աշխարհ, որտեղ սպասվում են բազում փորձություններ, ինքնադրսևորման և ինքնահաստատման լայն ասպարեզներ: Վստահաբար ձեր ձեռք բերած գիտելիքները կկարողանաք օգտագործել ամենատարբեր բարձունքներ հաղթահարելիս և մեր երկրի զարգացումն ապահովելիս:

Վստահ եմ՝ նոր կյանք եք մտնելու, որպես ազատ, անկաշկանդ, ինքնուրույն անհատներ, դառնալու եք մեր պետության արժանավոր քաղաքացիները, մեր ժողովրդավարական երկրի ամուր հենասյունը:

Սիրելի շրջանավարտներ, ցանկանում եմ ձեզ նոր ձեռքբերումներ և ամենայն բարիք:

Բարի երթ:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ